

ՆՈՏՐ ԴԱՄԻ ՔԻՄԵՐԱՆ^(*)

(Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ)

... Եւ յանկարծ

Մարախուղած աչքերի մէջ քիմերայի
 Ղողանջները մութ են շարժում,
 Կայծկլտալով բոյն են պեղում տեսիլքների
 Եւ բարձրածայն աղաղակում:

Աշտարակի վրայից կամաց
 Իջնում է ցած
 Քիմերան,
 Եւ տանիքի եզերքի մօտ, մագիլները
 Ոլորում է սիւնի ծայրին
 Եւ վայր նետում սարսուցող իր աչքերը:

Թափօրը դանդաղ
 Լուղովիկոս Սրբի՝
 Փարիզի Կարդինալի առաջնորդութեամբ՝
 Մետաքսածալ դրօշակներով
 Եւ փողերով ոսկեքանդակ
 Անց է կենում
 Դարի զնգուն, մեծադորդ
 Չայների հետ աատանելով:

Թագաւորի դէմքի վրայ Գողգոթայի շուք է ընկել:
 Թմբուկ, զանգակ եւ փողերի հրավառ ձայներ:
 Աչքերը վառ,
 Եւ ձեռքերը կրծքին ծալած խոնարարար,
 Դալուկ արքան
 Նայում է լուռ Միջին Դարում ցցւած Խաչին՝
 Սորբոնի մէջ

Կատաղօրէն բացատրւած
 Եւ նոր Պապի հրովարտակով
 Մերժւած

Իշխանների եւ դուքսերի քայլերի հետ
 Հրաբուխներով լեցւած Ֆրանսան՝
 Դաւադրութեան, ոխի եւ նենգ ատելութեան

(*) Հրատարակւելիք պոեմայի ճիշդ երգից մի հատւած:

Ստուեր է տանում:

Ու հեռաւոր զաւառների, բլուրների ծայրին ցցւած
Դաժան ու մութ դղեակներից,
Զրահաւորւած ասպետների

Դայլաբարոյ

Շուքն է սողում:

Ծունկերը վար, ժողովուրդը Փարիզի
Չոքել է:

Մուրացիկ վարդապետներ

Տաղ են երգում: Մինչ քանդակւած,

Նոտր Դամի դռան առջեւ

Անշարժ կանգնած, քարէ խմբով

Մեծ սրբերի դողդղացող ձեռքերի վրայ

Մի վշտահար լոյս է շարժւում

Եւ տենդի պէս արորում բոլոր արձանների

Մսերը,

Արքան չոքում, աղօթում է:

Վերը,

Քիմերաները

Ծիծաղում են:

Արաքական, ոսկեծաղիկ մետաքսների

Եւ սրածայր մի գլխարկի տակը կորած,

Ոլոր, թրջւած շրթունքներով

Եւ այտերով վարդագոյն՝

Ներս է մտնում թագուհին,

Եւ քաշքշում երկայն փէշը:

Հոհում է եղջիւրաւոր սատանան:

— «Մեսի՛ր, Ֆրանսան

Աղօթում է: Արծաթածայն մի դողանջ

Բոց է շարժում: Տեսէք, վարը, Սորբոնի մեծ վարպետի

Ճաղատ գլուխը դողդողում է»:

Ասում է

Եւ կուչ գալիս:

Եւ մինչ բարձր սիւնների շուրջ

Երգեհոնը թեւարկում է. քարերի տակ

Հուր է վառւում՝ աշտարակը կատարին

Քիմերան

Կէս խենդացած, մագիլները մխրճում է մարախուղին,

Շրթունքները երկարում՝

Նազովրեցի Յիսուսի դէմ

Պոռո՛ւմ:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ